ՏԵՂԵԿԱՆՔ
«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հոդված 40. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման հիմքերը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման հիմքերն են.

1) անձնական դիմումը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

3) քաղաքական, վարչական, ինքնավար կամ հայեցողական պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.

~~4) դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը.~~

5) սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.

6) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը (բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդի).

7) ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությամբ տառապելը.

8) հաստիքների կրճատումը և (կամ) դիվանագիտական ծառայության մարմնի լուծարումը.

9) ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին մրցութային-ատեստավորող հանձնաժողովի որոշումը.

10) դիվանագետի վարքագծի կանոնները խախտելը.

11) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները խախտելը.

12) ազատազրկման դատապարտելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը.

13) անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումը.

14) դատական կարգով դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

15) դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու՝ սույն օրենքով սահմանված կարգը խախտելը.

16) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

17) օրենքով սահմանված այլ հիմքերով:

2. Դիվանագետի պարտականությունները դադարում են նրա մահվան դեպքում:

3. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, բացառությամբ 18-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտոնի:

~~**Հոդված 41. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը**~~

~~1. Դիվանագիտական ծառայության պաշտոնում պաշտոնավարման առավելագույն տարիքը 65 տարին է:~~

~~2. Դիվանագիտական ծառայության պաշտոնում պաշտոնավարության առավելագույն տարիքը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանով դիվանագետը կարող է մինչև երեք տարի ժամկետով շարունակել պաշտոնավարել:~~